

**1. Ի Ր Ա Կ Ա Ն Հ Ա Տ Վ Ա Ծ**

**1.1. ՀԱՄԱԽԱՌՆ ՆԵՐՔԻՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇԸ**

ԼՂՀ համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2014թ. կազմել է 188840.3 մլն դրամ՝ 2013թ. 168563.6 մլն դրամի դիմաց: ՀՆԱ-ի հավելաճի տեմպը կազմել է 8.9 տոկոս, ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը 2.9 տոկոս:

2014թ. մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, ընթացիկ գներով, կազմել է 1268.1 հազ. դրամ, 3048.9 ԱՄՆ դոլար կամ 2296.8 Եվրո՝ 2013թ. 1137.9 հազ. դրամի կամ 2777.9 ԱՄՆ դոլարի և 2091.3 Եվրոյի դիմաց:

*Արտադրված համախառն ներքին արդյունքի կառուցվածքը*

	2013թ.	2014թ.	իրական հավելաճի տեմպը (տոկոսներով)	ՀՆԱ-ի կառուցվածքը (տոկոսներով)	
				2013թ.	2014թ.
				/ընթացիկ շուկայական գներով, մլն դրամ/	
<b>Համախառն ներքին արդյունք</b>	<b>168563.6</b>	<b>188840.3</b>	<b>8.9</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
Ապրանքների արտադրություն	61815.6	67192.1	9.6	36.7	35.6
այդ թվում՝					
Արդյունաբերություն	22455.0	24325.0	17.9	13.3	12.9
Անտառային տնտեսություն	293.5	356.0	24.4	0.2	0.2
Գյուղատնտեսություն	23589.9	24607.2	-0.2	14.0	13.0
Շինարարություն	15477.2	17903.9	11.9	9.2	9.5
Ծառայությունների արտադրություն	105796.0	119602.5	7.3	62.8	63.3
այդ թվում՝					
Շուկայական ծառայություններ	51814.9	54208.2	6.6	30.8	28.7
որից՝					
Տրանսպորտ և կապ	10782.9	11154.8	6.6	6.4	5.9
Առևտուր և հանրային սնունդ	11392.4	11750.0	-0.3	6.8	6.2
Ոչ շուկայական ծառայություններ	53981.1	65394.3	8.0	32.0	34.6
Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններ (-)*	8402.3	9861.4	16.9	5.0	5.2
Ապրանքների գուտ հարկեր	9354.3	11907.1	29.3	5.5	6.3

ՀՆԱ-ի իրական աճի վրա դրական ազդեցություն են ունեցել ապրանքների և ծառայությունների արտադրության ոլորտները՝ համապատասխանաբար 9.6 և 7.3 տոկոս:


ՀՆԱ-ի արձանագրված 8.9 տոկոս հավելաճի տեմպի 2.4-ական տոկոսային կետն ապահովել է արդյունաբերությունը, կառավարում և պաշտպանությունը, 1.1 տոկոսային կետը՝ շինարարությունը:

Կառուցվածքային տեսանկյունից 2014թ. մախրող տարվա համեմատ 0.5 տոկոսային կետով աճել է ծառայությունների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ:

Ի հակառակ դրա, ՀՆԱ-ի մեջ 1.1 տոկոսային կետով նվազել է ապրանքների արտադրության ոլորտի ավելացված արժեքի տեսակարար կշիռը:

\* Ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայություններն իրենցից ներկայացնում են ֆինանսական միջնորդների բանկային գործարքների ստացած և վճարած տոկոսների տարբերությունը: Քանի որ, գործնականորեն անհնար է անտեսել այդ ծառայություններն ըստ ճյուղերի, այդ իսկ պատճառով ֆինանսական միջնորդության անուղակիորեն չափվող ծառայությունների ողջ ծավալը գրանցվում է որպես պայմանականորեն ընդունված ինչ-որ ճյուղի միջանկյալ սպառում, որի թողարկումը հավասարեցվում է 0-ի, համապատասխանաբար ավելացված արժեքը հանդիսանում է բացասական մեծություն, այսինքն, ընդհանուր տնտեսության մակարդակով համախառն ավելացված արժեքների գումարը (ՀՆԱ) նվազեցվում է այդ մեծության չափով :

Համախառն ներքին արդյունքի դինամիկան (նախնական)<sup>1</sup>  
ըստ եռամսյակների (մլն դրամ)



ՀՆԱ-ի եռամսյակային կառուցվածքի դիտարկումը ցույց է տալիս, որ 2014թ. երկրորդ կիսամյակում արտադրվել է ՀՆԱ-ի գերակշռող մասը՝ 60.4 տոկոսը նախորդ տարվա 60.6 տոկոսի փոխարեն:

Համախառն ներքին արդյունքի կառուցվածքը՝ ըստ եռամսյակների (%)

	2013թ.	2014թ.
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>
I եռամսյակ	18.1	17.7
II եռամսյակ	21.3	21.9
<i>I կիսամյակ</i>	<i>39.4</i>	<i>39.6</i>
III եռամսյակ	27.2	26.4
IV եռամսյակ	33.4	34.0
<i>II կիսամյակ</i>	<i>60.6</i>	<i>60.4</i>